




Դասապլան

Ուսուցիչ՝ Մարիետա Մելիքյան

Առարկա	Ամսաթիվ	Կիսամյակ	Դասարան
Ֆիզիկա	25.11.2024	I	8 ^ա (21աշակերտ)
Թեմա	Ուսումնական նյութի ամփոփում		
Օգտագործվող նյութեր	8-րդ դաս. դասագիրք Ս.Վ.Գրոմով Ն.Ա. Ռոդինա Հրատարակչությունը՝ « Անտարես » (Երևան 2019թ.) ✓ Ֆիզիկայի տեսոր, հաշվիչ ✓ Առաջադրանքի թերթիկ ✓ Խնդրագիրք		
Նպատակը	Սովորողները արդեն գիտեն ✓ Ինչ է ուսումնասիրում դինամիկան,հաշվարկման մարմնի հասկացությունը, ✓ Նյուտոնի առաջին օրենքի ձևակերպումը,այն պայմանները,որոնց դեպքում գործում է Նյուտոնի առաջին օրենքը ✓ Ուժն արագության փոփոխման,հետևաբար արագացման առաջացման պատճառն է,Նյուտոնի երկրորդ օրենքի ձևակերպումը,ուժը վեկտորական մեծություն է,ուժի միավորը ✓ Փոխազդեցության ժամանակ առաջացած ուժերը նկարագրվում են Նյուտոնի երրորդ օրենքով ✓ « Մարմնի իմպուլս» հասկացությունը,դրա բանաձևը, չափման միավորը, իմպուլսի պահպանման օրենքը,փակ համակարգի սահմանումը ✓ Որ շարժումն է կոչվում ռեակտիվ ✓ Էներգիա,մեխանիկական էներգիա ,մեծությունները չափման միավորները,մեխանիկական էներգիայի տեսակները ✓ Ինչ է լրիվ մեխանիկական էներգիան,լրիվ մեխանիկական էներգիայի պահպանման օրենքը, ինչ պայմանների		

	դեպքում է պահպանվում լրիվ մեխանիկական էներգիան, էներգիայի էկոլոգիապես մաքուր աղբյուրների մասին Այս դասին սովորողները կիմանան կամ դասի նպատակն է... Խորացնել և ընդլայնել աշակերտների գիտելիքներն ու հմտությունները առաջին կիսամյակում անցած նյութի վերաբերյալ:
Խնդիրները	✓ Որոնք են առաջին կիսամյակում անցած նյութի հիմնական հասկացությունները:
Արժեքային համակարգ	✓ Կարևորի ֆիզիկա առարկայի դերը տրաբանական մտածողության զարգացման գործում:
Միջառարկայական կապ	Հայոց լեզու. ✓ Կարողանա կարդալ, հասկանալ կարդացածը, առանձնացնել կարդացածի կարևոր գաղափարները: Կարողանա իր մտքերը արտահայտել գրավոր և բանավոր եղանակով, այնպես, որ խոսքը համապատասխանի լսարանին: Հանրահաշիվ. ✓ Կարողանա կատարել գործողություններ տառային արտահայտություններով կոտորակների հետ, կատարել չափման միավորների ձևափոխություններ, մասն արտահայտել տոկոսով, հաշվել թվի տոկոսը, համառոտագրել խնդրում բերված տվյալները:
Այսօրվա դասի գիտելիքները սովորողները կօգտագործեն հաջորդ դասերին	Հաջորդ դասարաններում ֆիզիկա առարկայի ուսումնասիրության ժամանակ:
Այս դասի թեման կապվում է իրական կյանքին հետևյալ կերպ	✓ Օգտագործի ստացած գիտելիքները իր ամենօրյա գործունեության մեջ:
Խաչվող հասկացություններ	Կայունություն և փոփոխությունը ✓ Արագություն և արագացում մեծությունների կախումը ժամանակից

		✓ Իմպուլսի պահպանման օրենքը: Լրիվ մեխանիկական էներգիայի պահպանման և փոխակերպման օրենքը: Օրինաչափություններ ✓ Նյուտոնի երեք օրենքները, Արքիմեդի օրենքը: ✓ Մաթեմատիկական և զսպանակավոր ճոճանակների տատանումների պարբերությունների կախումը համակարգի պարամետրերից Պատճառ և հետևանք ✓ Ուժը որպես մարմնի արագացմա պատճառ: ✓ Ռեզոնանսի առաջացումը Համակարգեր և համակարգերի մոդելներ ✓ Մաթեմատիկական ճոճանակ Ջսպանակավոր ճոճանակ		
Կարողունակություններ		✓ Լեզվական գրագիտություն և կարողունակություն ✓ Սովորել սովորելու կարողունակություն		
Վերջնարդյունքներ		Աշակերտը կկարողանա. ✓ Սահմանել այրման տեսակարար ջերմություն ֆիզիկական մեծությունը ✓ Կիրառել վառելիքի այրման ժամանակ անջատվող ջերմաքանակի հաշվման բանաձևը		
Կապը Հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված հանրակրթական հիմնական ծրագրի շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հետ		Հ- 27) բացատրի գիտելիքի կարևորությունը, սովորելիս դրսևորի կամք և վստահություն սեփական ուժերի նկատմամբ. Հ-33) ճանաչի իր ուժեղ ու թույլ կողմերը և դրսևորի ինքնազարգացմանը միտված վարքագիծ:		
Տերմիններ		Նոր տերմիններ չեն ներմուծվում		
Գործողություններ(Ժամ/տևողություն)	Ուսումնական Գործողություն Ուսուցիչ	Ուսումնական Գործողություն Աշակերտներ	Հստակ ձևակերպումներ, Հարցեր,գաղափարներ	Կիրառվող մեթոդ(ներ)

Դասի սկիզբ (10ր)	Դասը սկսում են հաշվառում կատարելով, դասի թեման և նպատակները ներկայացնելով: Կազմակերպում են մտազրուհի: Ինչ եք հիշում անցած նյութից:	Լսում են ուսուցչի հարցը, սահմանված ընթացակարգի համաձայն ձեռք բարձրացնում և արտահայտում իրենց միտքը: Մեկ սովորողի օգնությամբ քարտեզագրում ենք անում:		«Մտազրուհի»
Նոր նյութի մատուցում (7-8ր)	Դասարանը բաժանում են 4 խմբի՝ 3 հոգի կազմում են դատավորների և 3 հոգի՝ մասնագետների խմբերը, մնացած աշակերտները կիսվում են երկու հավասար խմբերի՝ Ա և Բ: Նախօրոք ընտրել են "Լաբսթեր" հարթակից մի քանի սիմուլացիաներ կրկնության բաժնի վերաբերյալ և խնդրում են խմբերին ևս անցնել հղումներով և կատարել առաջադրանքը:	Դատավորների և մասնագետների խմբերի մասնակիցները նստում են կողք-կողքի: Ա և Բ խմբերի բոլոր մասնակիցները գրում են մի քանի հարցեր առանձին թերթիկների վրա:	Ստեղծագործական մտածողության զարգացման ամենաարդյունավետ միջոցներից է դերախաղը: Հանձնարարում են խմբերին անցնել հղումներով որոնք տեղադրված են "Լաբսթեր" հարթակում և կատարել սիմուլացիաներ ու ներկայացնել դասարանին  	
Ուղղորդված աշխատանք (14-15ր)	Մոտենում են խմբերին, հետևում աշխատանքներին,	Համագործակցելով միմյանց հետ խմբերը փորձում են ճիշտ կատարել		

	անհրաժեշտությ ան դեպքում պարզաբանումն եր եմ անում:	առաջադրանքնե րը:		
Ինքնուր ույն աշխա տանք (5ր)	Հետևում եմ աշխատանքի ընթացքին:Առաջ արկում եմ խաղը շարունակել այնքան ժամանակ մինչև բոլոր հարցերը ավարտվեն:	Ա խմբի մասնակիցներից մեկը ներկայացնում է իրենց աշխատանքը,մա սնագետները վերլուծում են՝ արդյոք կա ավելացնելու որևէ բան թե ոչ:Դատավորներ ը գնահատում են: Բ խմբի մասնակիցներից մեկը ներկայացնում է իրենց խմբի աշխատանքը, մասնագետները վերլուծում են՝ կա որևէ բան ավելացնելու,ուղղ ելու,թե ոչ: Դատավորները գնահատում են:		
Ամփոփ ում (4ր)	Շնորհավորում եմ հաղթող թիմին և գովեստի խոսքեր ասում:	Դատավորները խորհրդակցում են մասնագետների հետ և հայտարարում այն թիմի անունը ,որը ավելի ճիշտ էր կատարել աշխատանքը:		
Գնահա տում (2ր)	Գնահատումը կատարելիս հաշվի եմ առնում դասի ընթացքում աշակերտի ակտիվությունը՝			

	Եզրահանգումներ ը կատարելու ունակությունը, փոխներգործուն մեթոդների կիրառումը: Հաշվի առնելով սեփական դիտարկումները՝ գնահատում եմ 4-5 աշակերտի:			
Տնային աշխատանք (1 ը)	Ա.Լ. Մամյան Ֆիզիկայի խնդիրների ժողովածու 8 Խ.7.2.18,11.2.7  Անցնել հղումով և կատարել առաջադրանքը:			